

15895



Quinhans
1906

250

207



A. Bedikian
1903

Ա. Վ. Օ.

Դ. Ա. Ր Ո Ւ Թ Ա Խ Ա

Ե Ր Գ Ա

ՏՊԱՐԱՆ «ԿԻԼԻԿԻԱ»
ԳԱՀԻՐԵ

1906

89.99
7 - 43

M.

2003

ՀԱՅ. ՊԵՐԵԲԵՐՅԱՅ

«Խաչիկ» ի բանագության

1.99
-43 (ՄԵԺԼԵՏՈՎԱԾ)
Ա. Վ. ՕՐԵ

ԴԱՐԲԻՆԻՆ ԵՐԳԸ

Բ1-24248

Արտատպուհած «Ազատ—Բեմ» լրագրին



1900

ՏՊԱՐԱՆ «ԿԻԼԻԿԻԱ»

Գ.Ա.ՀԻՐԵ

Բ1-8818

ԳՐԱԴԱՐԱՆ

34945-ԿՊ

Արևածագունդի պատճենաթուղթ



ԽՈՎՃԱՐ ՎԱՐԴԱՐ

ԳՐԱԴԱՐԱՆ

1818 3-59

Կովկասի Խահատակմերու

Հիշատակի Ց



Հ Ե Ծ Ք Ք

ԴԱՐԲԻՆԻՆ ԵՐԳԸ

I
Վ. Ա. ՌՊԵՏԻՆ

Զարկ, զարկ, այ վարպետ, չէկ կայծեր թոցուք,
Կըռանէ՛ սալըդ, ձեւ տուր մնտաղիդ,
Քամի՛ տուր փուքսիդ թոքերն ուռեցո՛ւք,
Արծարծէ՛ բոցը հանգած հընոցիդ:

Ժանդոտ, բիրտ երկաթն օճախը խըրէ,
Անձեւ երկաթիդ բերա՛ն. շինէ սուր,
Դժոխքի բոցով բարկ մնտաղը ճզմէ՛,
Ձեւ տուր պողպատին, կոփէ՛, փայլեցո՛ւք:

Զար բաղդն երկաթին կապեց մարդուս կեանք,
Երկաթն է վճռող սեւ ու կարմիր օր.
Առանց երկաթին արդարն անվըտանգ
Ե՞րբ անցաւ երկրիս ուղին նենդաւոր:



Այդ նենգ ուղիին փշոտ ու մրթին
Յատակագիծը արիւնն է գըծած .
Խեղճ ու զրկեալին . ստրուկ գերիին
Իրաւունք վճռող լոկ սու ըլ մնաց :

Երկաթն երկաթին կը փշրէ մէկ օր .
Եսն ու բռնութիւն կը դառնան գերի .
Շուր կութայ աշխարհ , գերին դարեւոր
Կը փխուի տէրի , եւ ոխը՝ սէրի :

Ուժով զարկ , վա՛րպեա , կայծերըդ թըոցուր .
Հանդած հընոցիդ մէջը կատաղի
Ահեղ վըրէժի դըժոխք բըռենկցուր ,
Մինչեւ որ փշրես շղթադ ստրուկի :

II

Ք Ո Ւ Ր Ա Ց

Ու լըսեց վարպետն . աչեց աշկերտին ,
Փոքրիկը կայտառ թըռաւ դէպ քուրան ,
Բոնեց թեւձակներն հաւասար ուսին ,
Աջ ձախ աստանուեց մութին մէջ զնդան ,

Քաշեց փըքուոոյցն , հով տուեց վուքսին ,
Փուքսին զոյդ թոքերն լիք լիք ուոհցան ,
Ածուխը կըպաւ մէջն հանգած փոսին ,
Թըռնկից օճախն , կայծերը թըռա՛ն ... :

Անգործ , անաշխատ դարերէ ի վեր
Փուքսը կախուած էր մութին մէջն ահեղ ,
Օդասուն հիմա լայնկէկ փորոքներ
Պինդ պինդ շունջ առին . լարուեցան ուժեղ :

Որպէս զիրաւոր կատաղի գազան
Զարթեաւ օճախը քունէն դարեւոր .
Դըղրդաց կուրծքը ցաւո՛ց աւազան ,
Ծուխ ծըխաց բերնէն թանձր ու ահաւոր .

Բացուեց գալարուած վիշտպին բերան ,
Շունջ առաւ տուաւ կըլափը նորէն ,
Բոց ու ծուխ ժայթկեց անէծքի նման ,
Դուրս սողաց կայծակն իր սրտի խորէն :

Հանգած հընոցը նորէն առաւ կեանք .
Խաւար դարբնետան օճախը կայտառ

Կարծես թէ տուաւ նոր փայլ , նոր բերկրանք,
Մըռայլ զընդանը գարձաւ գեհեն վառ :

Ժպտաց վարպետը . ամպոտ մութ ճակտէն
Հոգերու դաժան մասյլը թըռաւ ,
Լոյս ու խնդութիւն ցայտող օճախէն
Վարպետին դէմքը նոր չէկ փայլ առաւ :

III

ԿՈՅԾԵՐԻ Ը

Կայծ ու կայծիկներ, օ՛չ, ի՞նչ անուշ էք
Երբ կը թոչիք դուք քու բայի բովէն .
Բեկրեկ, ոստոստուն, թըռէ՛ք հա, թըռէ՛ք
Նոր կեանք թող ձու լու ի ձեր մեռնող կեանքէն :

Դուք հոգինե՛ք էք կայծերու փոխուած,
Հոգինե՛ք մաքուր մարտիբոսներու ,
Որ մեռելութեան օճախէն թաղուած
Յարութիւն կ'առնէք նոր կեանք ձուլելու

Կեանքն ալ ձեզ նման կա՛ք, աշխոյժ . մեռնող .
Պլպլացող կայծ մ'է, դիւ բաշէջ լազտեր,
Ցաւոց քու բայէն յարութիւն առնող
Մեռնող ու ձու լող նոր թշուառ կեանքեր :

Բոցանի՛չ կայծեր, ընկէ՛ք աջ ու ձախ .
Ձեր ման է կեանքին ոսնացող բողոք,
Բողոք բանութեան դէ՛ լեզու ով խիզախ
Խանձելու գաղան սրահին անողոք :

Աշխարհ՝ քու բա՛յ, բռնութիւնն հալոց,
Մութ զնդանի պէս կը հալէ մարդիկ .
Կեանքի խարոյկը կը վառի անբոց
Հազցուցած զոհին արիւնէ շապիկ :

Կայծե՛ք, կայծիկներ, կայտաեցէ՛ք ու բախ .
Վարպետին շուրջը աշխոյժ պարեցէ՛ք .
Մութ հոգիներու մէջ թրաէք խիզախ
Անչէջ զըրիժու . հրդեհ վառեցէք :

Քանի արիւն կայ ու թող վառի օճախ .
Կայծ ցայտէ չորս դին լեզուով հըրեղէն :

Թող հանգչի օճախն երբ կեանքն է խաղաղ,
Երբ մարդ կշահանաց եղորդն արիւնէն...

IV

Վ Ա Ր Պ Ե Տ Ի Ն Ե Ր Գ Բ

Վարպետը քուրան խրենց խառնոցը ,
Կըրակէ մահճ բացաւ երկաթին ,
Աշկերտը ուժով արծարծնց բոցը ,
Կայծերը թրոան կայտեցին չորսդին :

Ապա խընայքով մի ժանգոտ երկաթ ,
Որ կարծես անպէտք ընկած էր գետին ,
— Անպէտք են միթէ խոփ ու խաչերկաթ —
Խըրեց օճախը , «ա՛յ»... ըրաւ հոգին .

«Ախ»ը դեռ գետին չընկած մարմնոցաւ ,
Գընաց միացաւ օճախի խոփին ,
Կարմիր ու կապոյտ նոր բոցեր ծընաւ ,
Վարպետը գոռաց չիկնող երկաթին .

— «Եառէ՛ հա՛ն , վառէ՛ , մեռնի՛մ քու հոգուն ,
Բոցասաստ քուրայ իմ սրտիս խորն ալ
Խուլ բանկու մներու զեհեն կայ թագուն :

Գըլուխը գըրած արբնոտ երկրին
Հերթք ննջեցի վշտով թախծապատ .
Երազներ ինձի բիւր բիւր կրկնեցին՝
— Տեղ չունի անդէնն եւ ով չէ ազատ .

Երազնի՛ր ・・・ գարձեա՞լ ձեռքերնիդ զէնքեր
Կը վազէք ճակտիս կուտել կնճիռներ .
Դուք չէ՞ որ մտքէս թըռեր էիք վաղ ,
Երազնի՛ր գարձեա՞լ զիս յուզէք ու ա՞ղ :

Հողը չուզեր քեզ իր վրբայ կըրել ,
Քանի ստրուկ ես , քանի անպաշտպան ,
Գընա՛ ժանգոտ խոփդ սուր դանակ կըռել ,
Սեպհական կեանքիդ , պատոյդ պահա պան :

Աստուծոյ վառած պայծառ արեգակ
Քու գլխուդ վերեւ պիտի մութ ժուռագայ

Երբ չունիս վառօղ, դանակ եւ նիզակ
Որ անձար գլխու դ պահապան դառնայ:

Դու կը զրկուիս հանդերձէ, հացէ,
Որդիքըդ քաղցած կը վարեն գերի,
Անզէնն աշխարհի ուսին մէկ բեռ է.
Ստրուկ է. անպէ՞տք, ծառա՛յ օտարի:

Որքան լաց լինիս կը մնաս քաղցած,
Լացը չի հայեր բռնաւորին սիրա.
Արիւնով ծընած, արիւնով սընած
Ոյժին գէմ՝ ցոյց տալ պէտք է ոյժը բիրտ:

Գընա՛, ո՛վ անզէն եղբայր, քեզ պէտք չե՞ն,
Հալոցը նետէ խոփ ու գերանթիդ,
Գնդակ ու վառօղ երբ կը շառաչեն,
Դուն ալ գնդակով տէր եղեր գլխիդ:

V

Ե Ղ Բ Օ Ր Ո Ւ Ե Ա Ն Զ Ա Յ Ն Ը

Տըունկած օճախն դարձեր էր հընոց,
Վարդիտին երգովե երկաթը կակդած

Կապոյտ ու կարմիր կայծեր իբրեւ օձ
Աջ ձախ կը շանթէր չէկազէս կատղած:

Սւագ վարպետը հաստատուն գետնին
Կանզնած ջըլապինդ մուրձը վիր առաւ,
Բաղիսեց՝ մէկ ։ ։ երկուք ։ ։ մուրձը կըուանին
Այսպէս գործելու նոր նըշան տուաւ:

Կանզնած եռանկիւն երեք փորձ վարպետ
Բաղիսեցին թիք ։ ։ թաք ։ ։ կըուանին մուրձեր,
Զարկին հա զարկին մուրձերն անհեղեղ
Թեւերնին սօթատած հուժկու կտրիծն եր:

Քաշեց քու բայցն վարպետը, կարմիր
Երկաթը գըրաւ մեծ սալի վըրան,
Հալուածներուն դէմ համաբախ ու ժիր
Մուրձին տակ ուժգին գոռաց զիւ կըուան:

Դողաց դարբնետունն, գոռացին մուրձեր,
Տժժաց երկաթը, կապոյտ ու կարմիր
Կայծերով կարծես բողոքի ձայներ
Շանթերու փոխուած ընկան ցան ու ցիր:

Զարկին ու զարկին երկաթին տաք տաք,
Մինչեւ մետաղը առաւ որոշ ձեւ,
Քրտինքի շիթեր լայն կայլակ կայլակ
Թրջեցին գետինն ինչպէս յորդ անձրեւ :

Արեւու մի շերտ կախուեցաւ յանկարծ
Խաւար դարբնետունն լոյս իջաւ կարծես .
Պալան պալան ծուխն թըռաւ վերամբարձ
Միծաղ ճառաքեց վարպետին երես :

Նորէն մետաղը կրրակը քըրեց .
Ապա քաշեց գուրս բարկ ու չէկ երկաթ,
Արիւնով լեցուն դէպ տաշտը խրբեց
Տժտրժաց, սուլեց դարձաւ պինդ պողպատ.

Այդ եղբօր արիւնն էր թափուած երէկ,
Դարբնետան տաշտը լեցուած ջըրի տեղ,
Զի լըռեր եղբօր արեան ձայնն երթէք
Մինչ վըրէժ չառնէ արիւնը անմեղ :

Եղբօր արիւնն էր խըմած մէկ գազան...
Իրն ալ կը խըմէր վաղը մի հըրէշ ...

Այդ արեամբն ահա-մի սուրբ աւազան—
Մըկրտեց գործիքն, ու գոռաց վըրէ՛ժ :

«Վըրէ՛ժ ...» կրկնեցին տարերքն համօրէն,
Պինդ պինդ արձագանք տարին ու բերին.
Մըտին խորն քընած վուլգանը նորէն
Կատղած մըռնեց, գուրս պոռթկաց ուժգին :

VI

Դ Ա Շ Ո Յ Ն Ի Ն Ե Ր Գ Ը

Շեղփը պատրաստ էր: Վարպետը ուրախ
Բերան քաշեց սուրբ կոթ ամրացուց կեռ,
Մըրեց սայրասուր գործիքն մինչ երախ
Երգեց դաշոյնին տալով փայլ անմեռ :

«Շողա՛, չողչողա՛ լոյսին տակ բեկ բեկ.
Փայլ առ ու փայլ տուր, ցանկալի՛ դաշոյն,
Մութ գիշերի պէս կեանքը անցերեկ
Պայծառ օր դարձուր, միռնի՛՛ քու հոգւոյն:

Լեռնաշափ վիշտեր դիզուեր ԽՍՀՄ ԽՍՀՄ ԽՍՀՄ
Զեռքը կուս շղթայ, ու վիզը անո՛ր
ՀԱՅ-ԱՐՄ. ССР



Սարուկի լուծ կայ դրուտծ իմ վըզիս
Եւ ոտքը չղթայ կապուած ծանրակուռ:

Ազատ է նա, ով կանգնած է հըպարտ.
Արիւնով պէտք է բանալ ճանապարհ:
Գաղանի որջ է աշխարհն արջնպարտ,
Առանց քեզ, դա՛շոյն, ապրիլ չէ հընար.

Չողա՛, չողչողա՛ անկուշտ ու անշէջ
Արեան ծարաւի, ով անգին գործիք,
Մըտիր զաղանի սիրտ ու թոքին մէջ
Գալարուէ՛, գուրս բեր աղիք, փորոտիք»

• • • • • • • • • • • •
• • • • • • • • • • • •
Հնկե՛ր հարազատ, ողջո՛յն քեզ, ողջո՛յն,
Թէ, չուզես ապրիլ երկրին խորթ զաւակ
Ա՛յս է բռնութեան դասը, առ դաշոյն,
Աւաղակին դէմ լինել աւազակ • • • :




2p

mp

15895

Գիւղ 1 դրւ. սղչ



2013

